

րեցեալ Ուսուցչին կը գտնենք փոքրիկ արեղան միւսանգամ: Ղուկաս Գառնեցի կը գրէ Մովսէս «ի մանկութեան իւրում սնեալ եւ վարժեալ ի յուսումն աստուածաշունչ զրոյ ի հրահանգս բարերջանիկ եւ նակեղ մեծ վարդապետին Սրապիոնի, եւ առեալ ի նմանէ հրաման վարդապետական»: Անիկա Տիգրանակերտ էր 1606 Ապրիլ 26ին, տակաւին «տհաս ուսմամբ եւ հասակաւ»<sup>4</sup>, երբ կը վախճանէր Սրապիոն. եւ լացաւ իւր մեծ Ուսուցչին մահը դառնաղի:

#### 5. ՄՈՎՍԷՍ ԱՌ ՈՏՍ ԳՐԻԳՈՐ ԿԵՍԱՐԱՅԻՈՅ

Սրապիոն նկատած էր յանձին իւր աշակերտին խոստմնալից ապագայ մը. եւ խորհած էր նախահոգութեամբ յանձնել դանիկա Գրիգոր Կեսարացոյ խնամքին, պատուիրելով, որ հոգ տանի «ընդ փոյթ»<sup>1</sup> տալ անոր «զիշխանական պատիւ վարդապետութեան»: Այս իմաստով կը գրէ Առաքել. «Բայց Սրապիոն վարդապետն մտօք նկատեալ իմանայր յոգի իւր, զի շնորհք աստուածային երեւի առ տէր Մովսէսն, ընդ որոյ ցաւակցարար հոգաց զնա. վասն զի կոչեաց առ ինքն

<sup>4</sup> Առ. Դարիժեցի, էջ 284:

<sup>1</sup> Թոփեան, Ցուցակ Խ. Վ. Դադեանի ձեռագրաց, Ա., էջ 69. «Սրապիոն Ուսուցչին, որ եղև կաթողիկոս. սա ունէր երկուս (աշակերտս)՝ Գրիգոր Կեսարացին եւ Մովսէս Սիւնեցին: Ի վախճանելն սորա Գրիգոր(ի)ն տուեալ էր իշխանական պատիւ վարդապետութեան. եւ պատուիրեալ զի հետ վախճանին փոյթ ընդ փոյթ տացէ զիշխանական պատիւն Մովսիսին, որ եւ արար նա զհրամանն»: